

ԲՄԱԳ-ի համառոտ ներկայացում

Ազդեցություններ և մեղմացման միջոցառումներ

ԲՄԱԳ-ի համաձայն, Ծրագրի իրականացման արդյունքում ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական միջավայրերը ենթարկվելու են որոշակի բացասական ազդեցությունների: Սակայն, նշված ազդեցությունները կմեղմացվեն՝ սահմանված չափանիշներին համապատասխանող պատշաճ կառավարման միջոցառումների կիրառմամբ: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Ծրագրի տարածքով հոսող մակերևութային և ստորերկրյա ջրերի առկայությանն ու որակին: Ծրագրի իրականացման արդյունքում զգալի փոխախտություններ է կրելու տեղի լանդշաֆտը, որն ավանդաբար օգտագործվում է տեղացի բնակչության կողմից տարբեր նպատակներով: Առկա է վիզուալ և լանդշաֆտային ազդեցությունների հավանականություն: Ծրագրի մանրակրկիտ նախագծման ժամանակ հաշվի են առնվում վերոնշյալ հնարավոր ազդեցությունները: Մի շարք կառավարման պլաններում նկարագրվում են հնարավոր ազդեցությունների մեղմացման ուղիները: Լիդիանն ընդունում է այն փաստը, որ տեղական համայնքների աջակցությունն ու բարյացակամությունը կախված է ընկերության կողմից ծրագրի պատշաճ կառավարումից:

Կենսակերպ

Ծրագրով պայմանավորված վերաբնակեցում չի նախատեսվում: Բնակիչներից մեկը համաձայնել է վաճառել իր գույքը: Այն օգտագործվելու է որպես մշտադիտարկման կայան: Ակնկալվում են տնտեսական վիճակի փոփոխություններ՝ գյուղատնտեսական հողերի փոխակերպման և հողերի հասանելիության փոփոխության հետ կապված: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է որոշ հողատարածքների ձեռքբերում, ինչպես նաև մյուսների վարձակալում:

Ազդակիր բոլոր հողատերերի և հողօգտագործողների պարագայում կիրառվել է և նախատեսվում է կիրառել պատշաճ փոխհատուցման մեթոդներ, այդ թվում՝ “հող հողի դիմաց” տարբերակը, կենսակերպի պահպանման և շարունակման նպատակով:



Կենսաբազմազանություն

Ծրագրի արդյունքում ազդեցության է ենթարկվելու *Մասունի ծիրանավոր* ալպիական բուսատեսակի “կրիտիկական կենսամիջավայրը”: Ենթադրվում է, որ Ծրագիրն ազդելու է նաև *Գորշ արջի* տեղական պոպուլյացիայի կենսամիջավայրի վրա, որի ազդեցության չափը որոշվելու է 2015-2016թթ. լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում:

Ազդեցությունների մեղմացման նպատակով, Լիդիանը նախատեսում է Ամուլսար լեռան շրջակայքում ստեղծել առանձնացված տարածք, որտեղ չեն կատարվելու աշխատանքներ և որտեղ իրականացվելու է բնական և կրիտիկական կենսամիջավայրերի պահպանություն: Բացի այդ, նախատեսվում է իրականացնել առանցքային տեսակների հետազոտման և վերականգնման ծրագրեր, ինչպես նաև բնական կենսամիջավայրի վրա ազդեցությունների փոխհատուցման նպատակով ստեղծել “կենսաբազմազանության փոխհատուցում” որպես Ջերմուկում նախատեսվող Ազգային պարկի մի մաս: